ՀԱՅԴԵԼԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայդելբերգ, Գերմանիա
Նոյեմբերի 25-29, 2015

UNIVERSITÄT HEIDELBERG
ZUKUNFT SEIT 1386

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Հայդելբերգի համալսարանը, որը հիմնադրվել է 1386 թ.-ին, Գերմանիայի ամենահին համալսարանն է և Եվրոպայի ամենահեղինակավոր հետազոտական համալսարաններից մեկը: Գերմանական հետազոտական հիմնադրամի Գերազանցության նախաձեռնության երկու փուլերում, ինչպես նաև միջազգայնորեն ճանաչված վարկանիշային աղյուսակներում ձեռք բերված հաջողությունները ապացուցում են, որ Հայդելբերգի համալսարանը արժանիորեն գերազանց հեղինակություն և առաջատար դեր ունի գիտական հանրության շրջանում:

Հայդելբերգի համալսարանը առաջարկում է գիտակարգերի մի ամբողջ շարք՝ ինչպես հումանիտար, իրավագիտական, հասարակական գիտություններ, այնպես էլ բնական գիտություններ՝ ներառյալ բժշկություն: Իբրև բազմակողմանի համալսարան այն շարունակ ամրապնդում է առանձին գիտակարգերը, խթանում միջգիտակարգային համագործակցությունը և փոխանցում հետազոտության արդյունքները հասարկությանը և արդյունաբերությանը:

Համալսարանը բնութագրում է իրեն որպես հետազոտական համալսարան, որում կարևորվում է հետազոտությանը միտված դասավանդումը: Այն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել մարդկության առջև ծառացած հիմնահարցերը միջգիտակարգային համագործակցության միջոցով:

Անկախ կրտսեր հետազոտական խմբերի և համակարգված

ասպիրանտական ծրագրերի միջոցով համալսարանը հետազոտությանը միտված դասավանդման և երիտասարդ գիտնականներին վաղ հետազոտական փորձով ապահովելու նորագույն միջոցներ է տրամադրում:

Համալսարանն իրազեկում է գիտնականներին աջակցության ծրագրերի մասին, խորհրդատվություն է տրամադրում դիմումների ընթացակարգերի և հետազոտության ֆինանսավորման իրավական հարցերի շուրջ և աջակցում է հետազոտողներին իրենց ծրագրերի իրագործման մեջ:

Հայդելբերգի համալսարանի նպատակն է նաև գիտական արդյունքները հասանելի դարձնել ամբողջ հանրությանը: Այդ իսկ պատճառով համալսարանը խթանում է գիտելիքի մշտական փոխանակումը բիզնեսի ոլորտի, արդյունաբերության, տեղական իշխանությունների և ասոցիացիաների հետ:

ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԴԵԼԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հայդելբերգի համալսարանում ներկայացվել և քննարկվել են հետևյալ հարցերը՝ Հայդելբերգի մաթեմատիկական և համակարգչային մեթոդների ասպիրանտական դպրոցը, Հայդելբերգի ֆունդամենտալ ֆիզիկայի ասպիրանտական դպրոցը, Բնական գիտությունների Եվրոպական ուսումնական լաբորատորիան, «Ասիան և Եվրոպան համաշխարհային համատեքստում» հետազոտական խումբը :

Հայդելբերգի համալսարանում ասպիրանտական կրթության հիմնական բնութագրիչներն ամփոփված են ստորև.

1. Հայդելբերգի համալսարանի բոլոր ասպիրանտական ծրագրերը նպատակ ունեն գրավելու լավագույն դիմորդներին, որոնք աչքի են ընկնում իրենց կարողություններով, փորձառությամբ և հմտություններով: Ասպիրանտական ծրագրերը կազմակերպվում են դպրոցներում, ինչը դյուրին է դարձնում ընդունելության և ամբողջ ուսումնական գործընթացի համակարգումը: Սա, իր հերթին, ապահովում է հավասարապես

բարձր չափորոշիչների կիրառումը բոլոր ծրագրերի համար: Ի հավելումն, ասպիրանտական դպրոցները շատ ակտիվ են տեղեկատվության տարածման և ապագա դիմորդներին աջակցման գործում:

2. Ընդունելությունը: Հայդելբերգի համալսարանի ասպիրանտական դպրոցների և հետազոտական հաստատությունների ընդունելությունը բազմափուլ գործընթաց է: Կարևոր է ընդունելության բոլոր փուլերի թափանցիկությունը:

3. Ասպիրանտական դպրոցները: Հայդելբերգի համալսարանում ասպիրանտական հետազոտական աշխատանքը կատարվում է հիմնականում ասպիրանտական դպրոցներում և անհատական հետազոտություն կատարող ասպիրանտների քանակը խիստ սահմանափակ է: Սա կայուն հետազոտական միջավայր ստեղծելու և խթանելու ուղիներից մեկն է, որի արդյունքում մեկ ուղղությամբ հարակից թեմաներով հետևողական, բազմակողմանի հետազոտական աշխատանքները միջազգայնորեն մրցունակ լինելու նախադրյալներ են ստեղծում: Մյուս կողմից Հայդելբերգի համալսարանը բաց է անհատական նախաձեռնությունների համար. ցանկացած անձ կարող է ատենախոսություն ներկայացնել պաշտպանության՝ նույնիսկ առանց ասպիրանտուրա ընդունվելու:

4. Ասպիրանտական դպրոցի աշխատանքի կարևոր մաս է շրջանավարտների հետ կապը: Սա թույլ է տալիս չափել ասպիրանտական ծրագրի միջազգային ազդեցությունը:

5. Հայդելբերգի համալսարանից կարելի է գիտական աստիճան ստանալ առանց հրատարակությունների՝ միայն ատենախոսության պաշտպանությամբ (շատ հետազոտողներ ընդլայնում և հրատարակում են իրենց ատենախոսության արդյունքները դոկտորանտուրայի շրջանակում): Մասնագիտական խորհուրդը սովորաբար կազմված է 2-3 անդամներից, որոնցից մեկը պետք է հրավիրյալ մասնագետ լինի, մյուսը ատենախոսության գիտական ղեկավարն է. սա ակադեմիական ազնվության վառ օրինակ է:

ՀԵՏԱԴԱՐՁ ԱՐՁԱԳԱՆՔ ՀԱՅԴԵԼԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների պատվիրակները, որոնք ներգրավված են Տեմպուս Վերիտաս ծրագրում, 2015թ-ի նոյեմբերին երկօրյա հագեցած ծրագրով ժամանել էին Հայդելբերգ: Հայդելբերգում ներկայացվեցին բնական գիտությունների, ֆունդամենտալ ֆիզիկայի, մաթեմատիկայի և համակարգչային գիտությունների ասպիրանտական ծրագրերի շրջանակում ընդգրկուն միջազգային ասպիրանտական ծրագրեր տրամադրելու ռազմավարությունները: Պատվիրակները նաև ծանոթացան հումանիտար գիտությունների ոլորտում ամենամեծ ասպիրանտական ծրագրին, քննարկում ունեցան Հայդելբերգի համալսարանի Միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտորի հետ և այցելեցին միջազգային մեծ ճանաչում ունեցող Եվրոպական մոլեկուլյար կենսաբանության լաբորատորիա:

Կարող ենք համոզված ասել, որ այցելության արդյունքում հայկական պատվիրակները հնարավորություն ունեցան ծանոթանալու շատ հետաքրքիր և օգտակար “լավ աշխատակարգի” հետ: Խմբային քննարկումների ընթացքում հետևյալ հարցերն էին պարբերաբար շոշափվում.

Ֆինանսավորում

- Ֆինանսավորումը կենտրոնական խնդիր է, մասնավորապես փորձարարական գիտություններում:
- Ընդհանուր առմամբ, համալսարանները հիմնական ֆինանսավորում ունեն, որը երաշխավորված է կանխատեսելի ժամանակահատվածի համար (այսինքն՝ շատ տարիներ):
- Բացի դրանից, նրանք մրցակցային կարգով դիմում են արտաքին ֆինանսավորման (օրինակ՝ Գերմանական հետազոտական հիմնադրամին, որը տարեկան 2 միլիարդ եվրո է տրամադրում Գերմանիայի համալսարանական համակարգին): Այս գումարը տրամադրվում է բարձր մրցակցային հիմունքներով և խթանում է գերմանական հետազոտական համակարգը:

- Ներքին և արտաքին ռեսուրսների բալանսը տարբերվում է տարբեր համալսարաններում:
- Լավագույն համալսարանները, ինչպիսիք են Եվրոպական մոլեկուլյար կենսաբանության լաբորատորիան կամ Մաքս Պլանկի հետազոտական հաստատությունները, ունեն ներքին ֆինանսավորման որոշակի տոկոս:

Ասպիրանտների ընտրությունը

- Էական կարևորություն ունի ասպիրանտական տեղերի թափանցիկ ու բաց գովազդումը:
- Ընտրության ընթացակարգը պետք է թափանցիկ լինի բոլոր թեկնածուների համար:
- Ընտրությունը պետք է բաց լինի միջազգային թեկնածուների համար:
- Ընտրությունը պետք է հիմնվի բացառապես գիտական գերազանցության վրա, և չպետք է սահմանափակվի վարչական կամ քաղաքական գործոններով:

Շահագրգռություն (Մոտիվացիա)

- Ասպիրանտները ավելի շահագրգռված կլինեն, եթե նրանց վերաբերվեն որպես սկսնակ հետազոտողների, այսինքն՝ երիտասարդ աշխատակիցների, ովքեր փորձում են անկախ հետազոտողներ դառնալ:
- Հետազոտական կրթաթոշակների համար մրցակցությունը նույնպես խթան է թեկնածուների համար, ովքեր հաղթում են:

Միջավայրը

- Հետազոտական միջավայրը պետք է ապահովի նորագույն տեխնոլոգիաներ:
- Դա լավագույն կերպով կազմակերպվում է հիմնական հաստատություններում (կենտրոններում), որտեղ աշխատում են շատ հետազոտողներ (դրանք մասնագիտացված են և ծախսերի առումով ձեռնտու):

Իրավական և վարչական սահմանափակումներ

- Հետազոտական և դասավանդման ազատությունը Գերմանական համալսարանական համակարգի հիմնական առավելությունն է:
- Հետազոտողները պետք է արդարացնեն հասարակության՝ իրենց տրված վստահությունը, այսինքն՝ մեծ պատասխանատվությամբ ծախսեն պետական գումարը:

Շրջանավարտների հետ կապը

- Հայդելբերգի համալսարանի և Եվրոպական մոլեկուլյար կենսաբանության լաբորատորիայի ասպիրանտական ծրագրերը հետևում են իրենց շրջանավարտների հետագա կարիերային:
- Սա կարևոր է ծրագրի որակը փաստագրելու համար (հաջողակ շրջանավարտներ ինչպիսի աշխատանք են գտել):
- Թեկնածուները իրենց կարիերան սկսում են շատ լավ համագործակցային կապերի հնարավորություններով:

Մագիստրատուրա- Ասպիրանտուրա կապը

- Մագիստրատուրան Եվրոպական կրթական համակարգի կարևոր մաս է:
- Այն պետք է ուսանողներին նախապատրաստի ասպիրանտուրայի փուլի համար, այսինքն՝ նրանք պետք է դառնան նորարարական փորձարարական հետազոտություն կատարող անկախ հետազոտողներ:
- Նպատակահարմար է վերացնել մագիստարտուրայի և ասպիրանտուրայի միջև խիստ սահմանները, օրինակ՝ աջակցել ամենատաղանդավոր ուսանողներին ուսման վաղ փուլում և նրանց ավելի շատ ժամանակ ընձեռել փորձարարական հետազոտություն կատարելու համար (սկսել ասպիրանտական նախագիծ՝ որպես փորձարարական գիտություններում մագիստրոսական կրթության մաս):

Հետազոտությանը միտված կրթություն

- Յուրաքանչյուր ատենախոսության հիմքում անհատական,

նորարարական հետազոտություն է:

- Կանոնադրությունները չպետք է սահմանափակեն հետազոտությունը:
- Կարևոր է, որ համակարգված ասպիրանտական կրթությունը, բացի փորձարարական աշխատանքից, չզբաղեցնի թեկնածուների ժամանակի 10%-ից ավելին:

ՀԱՅԴԵԼԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐՈՎ[4]

(Մի քանիսը)





[4]Բոլոր ներկայացումները կգտնեք հետևյալ հղմամբ՝ http://tempusveritas.am/?page_id=514

Vision in 2007

- Establish an internationally visible Graduate School of Molecular and Cellular Biology
- Establish transparent recruitment and assessment criteria to aid Pis in recruit qualified PhD students
- Implement innovative mentoring and training concepts for doctoral researchers
- Retain female researchers in science
- Prepare graduates for leadership positions in academia and beyond

Vision in 2007

- Establish an internationally visible Graduate School of Molecular and Cellular Biology
- Establish transparent recruitment and assessment criteria to aid Pis in recruit qualified PhD students
- Implement innovative mentoring and training concepts for doctoral researchers
- Retain female researchers in science
- Prepare graduates for leadership positions in academia and beyond

Origin of HBIGS doctoral researchers (by nationality)



September 2015: 384 students

Origin of HBIGS doctoral researchers (by nationality)

- **384** doctoral researchers/ **220** PhD, 13 MD Alumni
- **43%** international doctoral researchers
- **>40** nations
- **55%** female

Vision in 2007

- Establish an internationally visible Graduate School of Molecular and Cellular Biology
- Establish transparent recruitment and assessment criteria to aid Pis in recruit qualified PhD students
- Implement innovative mentoring and training concepts for doctoral researchers
- Retain female researchers in science
- Prepare graduates for leadership positions in academia and beyond

HBIGS: Application and Admission

HBIGS: Application and Admission

Open PhD positions:

Project leader		Project. No.	Deadline
Kuner, Rohini		KunerR_Agrawal0114	Deadline: 15. Oct 2015
Role of post translation modification in protein activity regulation in disease state			
Bading, Hilmar	Sprengel, Rolf	Bading_Sprengel0115	Deadline: 15. Oct 2015
Characteristics and consequences of subcellular calcium signaling in spinal neurons and glia in chronic inflammatory and neuropathic pain			
Kuner, Rohini		SFB1158_KunerR_Gangadharan	Deadline: 15. Oct 2015
Structural and functional analyses of peripheral nerves in diabetic neuropathy in transgenic mice			
Baumgaertner, Ulf		SFB1158_Baumgaertner	Deadline: 15. Oct 2015
Cortical signature of nociception and pain			
Carr, Richard		SFB1158_Carr	Deadline: 15. Oct 2015
Structural and functional interactions between nociceptive and non-nociceptive systems within the spinal trigeminal nucleus			

HBIGS: Application and Admission



Fig. 1: HBIGS admission procedure

2014: more than 2.000 qualified applications

Application and admission statistics



Students/Alumni



Vision in 2007

- Establish an internationally visible Graduate School of Molecular and Cellular Biology
- Establish transparent recruitment and assessment criteria to aid Pis in recruit qualified PhD students
- Implement innovative mentoring and training concepts for doctoral researchers
- Retain female researchers in science
- Prepare graduates for leadership positions in academia and beyond

Entry degree of doctoral researchers



N=592

Training Concept

- **Training activities**
  - PhD Core Course (twice per year)
  - Accompanying training measures (all year)
  - HBIGS Lecture & Annual Meeting
  - Summer schools
  - Student organized initiatives

>180 different training courses in:
- Advanced Molecular & Cellular Biology
- Imaging & Microscopy
- Model Systems
- Bioinformatics, Modelling & Simulation
- Scientific writing & complementary skills

-> All courses are evaluated by doctoral researchers

Total workload is less than 5% of PhD working time

New Challenges

New HBIGS Tracks: Integrated MSc/PhD



- Ample time for research oriented education, experimental experience, critical thinking, Profound scientific discussion
- Excellent perspective for integration of our best talents into the scientific career

Publication Record of HBIGS PhD students

$N_{pub} \approx 850$



- **350 PhD students have at least one publication**
- **211 PhD students have at least one 1st author publication**

The Hartmut Hoffmann-Berling International Graduate School of Molecular & Cellular Biology
HBIGS

ՄԵՐ ԱՅՑԸ ՀԱՅԴԵԼԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ որոշ ընթացակարգերը և աշխատակարգերը կիրառվում են Հայաստանում, բայց դրանց ինչպես հարկն է չեն հետևում, հետևաբար, դրանք անհրաժեշտ որակը չեն ապահովում:

Դրանցից է հետազոտության ընթացքի վերահսկումը, որը Եվրոպական համալսարաններում ասպիրանտական կրթության կարևոր մասն է և նպաստում է, որ բոլոր շահագրգիռ կողմերը ներգրավված լինեն գործընթացում: Այսպիսով, պետք է ավելի մեծ կարևորություն տալ վերահսկման գործընթացին հատուկ սեմինարների, հարց ու պատասխան ձևաչափերի միջոցով՝ ստուգելու ասպիրանտների առաջընթացը, պարզելու հնարավոր խնդիրները, որոնց առջև նրանք կարող են կանգնել, և տալ օգտակար հանձնարարականներ: Բացի այդ, անհատական պլանը պետք է մանրամասն քննարկվի, և ասպիրանտի կողմից դրա իրականացումը խստորեն վերահսկվի:

Հինվելով Եվրոպական համալսարանների փորձի և աշխատակարգի վրա՝ կարելի է կատարել հետևյալ առաջարկությունները՝

1. Ասպիրանտական կրթության տևողությունը (3 տարի) կարելի է դարձնել 4 տարի:
2. Կարելի է ներմուծել երկու գիտական ղեկավարի գաղափարը: Համատեղ ղեկավարումը ապահովում է համատեղ պարտավորություններ և կարծիքների բազմազանություն:
3. Նպատակահարմարկլինիկականոնավորվերապատրաստման դասընթացներ կազմակերպել գիտական ղեկավարների համար՝ բարձրացնելու նրանց մասնագիտական որակները: Գիտական ղեկավարների համար կարելի է կազմակերպել հատուկ դասընթաց՝ «Հետազոտության ղեկավարում»:
4. Դիմորդների կողմից ատենախոսության թեմայի առաջարկի պարտադիր ներկայացումը որպես ընդունելության կարևոր բաղադրիչ կարող է օգնել ընտրելու այն ասպիրանտներին ու հայցորդներին, ովքեր ունեն

համապատասխան հետազոտական հմտություններ և կախված չեն ղեկավարների կողմից առաջարկվող թեմաներից: Նման բաղադրիչի ներմուծումը կարող է ապահովել նաև ատենախոսությունների թեմաների բազմազանությունը:

5. Ընդունելության բազմափուլ գործընթացի ներմուծումը կարող է օգնել վերհանելու ապագա ասպիրանտների հետազոտական հմտությունները, ինչն էլ իր հերթին կնպաստի հետազոտական աշխատանքի իրատեսական և օպտիմալ պլանավորմանը:

6. Ասպիրանտ - ղեկավար հարաբերությունները պետք է հիմնվեն գրավոր պայմանագրի վրա, որտեղ սահմանված են երկու կողմերի պարտավորությունները:

7. Առաջին երեք ամիսների պայմանական փուլը և ուսումնական կարիքների վերլուծությունը նույնպես կարող են արդյունավետ աշխատակարգ լինել:

8. Կրթական բաղադրիչի տեղափոխումը մագիստրոսական ծրագրեր կարող է արդյունավետ լինել՝ նախապատրաստելու ավելի անկախ հետազոտողներ ասպիրանտական կրթության հենց սկզբնական փուլից, այսպիսով, նրանց հնարավորություն տալով ավելի շատ ժամանակ տրամադրել հետազոտությանը և ավարտել այն ավելի կարճ ժամկետում: Ավելին, անհրաժեշտ է իրականացնել փոխանցելի հմտությունների համակարգված ընդգրկում մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերում:

9. Հետևյալ դասընթացները կարող են ընդգրկվել ասպիրանտական պարտադիր դասընթացների ցանկում՝ «Դասավանդում և ուսուցում», «Հետազոտության մեթոդներ և էթիկա», Հետազոտական աշխատանք գրելու հիմունքներ», «Կազմակերպչական և ղեկավարման հմտություններ»:

10. Արդյունավետ կարող է լինել հրավիրված, այդ թվում նաև օտարերկրյա մասնագետների կողմից դասավանդվող հատուկ դասընթացների կազմակերպումը՝ հիմնվելով ասպիրանտների հատուկ կարիքների վրա:

11. Մեկ այլ արդյունավետ աշխատակարգ է նոր ասպիրանտական և մագիստրոսական ծրագրերի մեկնարկումը

Էրասմուս Մունդուս հիմնադրամի ֆինանսավորմամբ:

12. Ասպիրանտական ծրագրերը պետք է վերամշակվեն՝ բավարարելու աշխատաշուկայի պահանջները:

13. Ասպիրանտական ծրագրերի գովազդումը պետք է կատարվի լայնամասշտաբ իրազեկմամբ և տեղեկատվության տարածմամբ:

14. Որպես կրթական բաղադրիչ բոլոր ասպիրանտական ծրագրերում համակարգչային մոդելավորման դասընթաց ներմուծելու Հայդելբերգի համալսարանի գործելակերպը կարող է նույնպես արդյունավետ լինել:

15. Մասնագիտական խորհուրդների ձևավորման ընթացակարգը պետք է ավելի ճկուն լինի: Խորհուրդը պետք է կազմված լինի 3-5 անդամից, ում հետազոտական հետաքրքրությունները ամենամոտն են տվյալ ատենախոսության թեմային: Արտաքին փորձագետ հրավիրելու աշխատակարգ նույնպես կարող է ներմուծվել:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական բարձրագույն կրթական հաստատությունների կառուցվածքը տարբերվում է Եվրոպական համալսարանների կառուցվածքից, տարբեր են նաև հետազոտական միջավայրերը: Ըստ այդմ էլ տեղական համալսարանները կարող են իրենց ասպիրանտական կրթության մեջ միավորել միայն այն ընթացակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն հակասում մեր կրթական համակարգին: Այնուամենայնիվ, Եվրոպական համալսարանների կողմից կիրառվող որակի չափորոշիչները ամբողջ Եվրոպայում ասպիրանտական կրթության լավագույն աշխատակարգերի հիմնաքարն են: Զարգացող երկրների կրթական համակարգերը պետք է հաշվի առնեն այդ չափորոշիչները, եթե նրանք ցանկանում են ինտեգրվել բարձրագույն կրթության Եվրոպական տարածք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՎԵՐԻՏԱՍ ծրագրի թիմը իր երախտագիտությունն է հայտնում ծրագրի գործընկեր հայաստանյան և եվրոպական բոլոր ուսումնական հաստատություններին սույն բուկլետի մշակմանը աջակցելու համար:

ՎԵՐԻՏԱՍ ծրագրի թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցներին բուկլետի կազմման ու խմբագրման աշխատանքների համար:

Հատուկ շնորհակալություն նաև ծրագրի գործընկեր 4 եվրոպական հաստատություններին՝ Տեխնոլոգիայի արքայական ինստիտուտին, Բաթ Սպայի համալսարանին, Ժիրոնայի համալսարանին և Հայդելբերգի համալսարանին, հայաստանյան պատվիրակությանը ջերմ ընդունելության, աջակցության, ինչպես նաև հետբուհական կրթության մասին իրենց ունեցած փորձի փոխանակումն ապահովելու համար:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան, ինչպես նաև այցելել ծրագրի պաշտոնական կայք-էջ (www.tempusveritas.am) կամ գրել մեզ հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ veritas.mngt@gmail.com: